Գուրգեն Մահարի

Սեւ մարդը

8

— ՃԸ՛ԼԹ, ճը՛լթ, ճը՛լթ . . .

Բրուտանոցի և բոլոր շինությունների տանիքների եզրերից կախված սառցե լուլաներն սկսեցին կաթել:

— Ճը՛լթ, ճը՛լթ, ճը՛լթ . . .

Այս ապրիլն է: Այս նշանակում է, որ գարունը չի մոլորել իր ճանապարհը, զգացվում է նրա հեռավոր շունչը: Կգա մի օր նա: Դրսում մի կաչաղակ կչկչաց: Նամակ կստանամ, — մտածեցի ես, — նամակ կստանամ, — մտածեց Մամոն, Աշոտ դային չի հավատում կաչաղակներին, իսկ Սանոն, — այսպես ենք կոչում մենք բոլորս նրան, — իսկ Սանոն կաչաղակի կչկչոցը չլսեց անգամ . ի՞նչ կաչաղակի կչկչոց, նա ընդամենը երեք օր առաջ ստացավ Լյալյայից նրա լուսանկարը: Լուսանկարվել է նա Սարանսկում, լուսանկարից նայում է կենդանի, վառ Լյալյան և որ կողմից նայես, Լյալյան նայում է քեզ . ուղիղ քո աչքերին, շրթունքները կիսաբաց են, մարգարտաշար ատամները ժպտում են, նա կարծես ուզում է քեզ մի կարևոր, շա՜տ կարևոր բան ասել, բայց դեռ մտածում է, ասել, թե՞ չասել . . .

Հեշտությամբ չտիրացավ Սանոն այդ գանձին: Շատ բան անցավ-դարձավ:

— Ճը՛լթ, ճը՛լթ, ճը՛լթ . . .

. . . Մի անգամ Լյալյան, ըստ իր սովորության, ճաշի ընդմիջումին եկավ մեզ մոտ: Նա բարևեց լուրջ ու մտախոհ, խոսեց ամենահասարակ բաների մասին, առանց նայելու Սանոյի կողմը: Ես այդ համարեցի պարզապես պատահականություն: Բայց ահա նա հառաչեց, ժպտաց և ասաց .

— Սիրտս թեթևանում է, երբ խոսում եմ երեքիդ հետ . . .

— Չորսիս հետ, — ուղղում է Աշոտ դային:

— Երեքի՛դ հետ, — պնդում է Լյալյան և ոտքից գլուխ չափում է Սանոյին, կարծես առաջին անգամ է տեսնում նրան: Հետո նա ընդհուպ մոտենում է նրան, բռնում նրա խուսափող հայացքը և ասում .

— Չէ՞ որ դու խոստացել էիր ինձ: Ա՛ռ քեզ . . .

Ապտակը ոչինչ, միջին թափի, վերջ ի վերջո կանացի ապտակ էր, բայց մի՞թե դրանով ապտակը դադարում է ապտակ լինելուց, իսկ մյուս կողմից . . . Ես հիշեցի Աշոտ դայու հարվածը նույն թիրախին և ինձ թվաց, որ ես տեսա ամենածանր ապտակը կյանքում տեսած և անձամբ ճաշակած բոլոր ապտակներից:

Չէի սխալվել: Սանոն փուլ եկավ նստարանի վրա, ասես երկաթե ձեռքի ծանր հարվածից, գլուխն առավ ձեռքերի մեջ և մատներով ծածկեց աչքերը: Նա կռացավ, կծկվեց, փոքրացավ: Հանկարծակիի եկած բրուտանոցը լռեց:

— Ի՞նչ է պատահել, — լսվեց Աշոտ դայու անվրդով ձայնը:

— Խոստացել էր վերջ տալ թղթախաղին, իսկ ես հավատացի նրան, — չկտրելով աչքը արագ-արագ շնչող Սանոյից, մեղմացած գանգատվեց Լյալյան, — պարզվում է, որ նրա ոչ մի խոսքին չի կարելի հավատալ: Կոմենդանտը պատմեց . ի՛նքն է թուղթ խաղացողների գլխավորը: Կեսգիշերին ճամբարի պետը դուրս է գալիս և նկատում, որ սրանց բարաքում աղոտ լույս է վառվում: Վերցնում է կոմենդանտին, հերթապահ ավագին և մտնում է բարաքը: Տեսնում են նստել թուղթ են խաղում: Մոտենում են աննկատելի կերպով խաղաթղթերը խլելու համար: Կամպանիան իրար է անցնում: Խուզարկում են բոլորին, ոչ մի

խաղաթուղթ ոչ մեկի մոտ: Մերկացնում են սրան, ոչ մի խաղաթուղթ: Պետը ասում է՝ տղերք, ես տեսա, որ դուք թուղթ էիք խաղում, ես տեսա խաղաթղթերը, ցույց տվեք . ո՞ւր կորցրիք, խոստանում եմ չվերցնել: — Եվ ի՞նչ եք կարծում, այս հերոսը խաղաթղերը հանում է հենց իրեն պետի գրպանից: Ուրեմն ի՞նչ, — հարցնում է պետը, — խաղաթղթերը պետք է մնային իմ գրպանո՞ւմ . . . — իհարկե ո՛չ, — պատասխանում է այս հերոսը, — դուք դուրս կգայիք առանց դրանց: Խաղաթղթերը կմնային ինձ մոտ: Լավ, — ասում է պետը, — ես չեմ դրժում իմ խոսքը, բայց իմացիր, որ եթե մի անգամ էլ աչքովս ընկար, այնպիսի տեղ կուղարկեմ քեզ, որ այստեղը հիշես, ինչպես Ադամն է հիշում դրախտը . — Ճի՞շտ է, ասա, ճի՞շտ է . . .

Սանասարը լուռ էր:

— Այսօր կգնաս պետի մոտ, կհանձնես խաղաթղթերը և կխնդրես, որ քեզ տեղափոխի յոթերորդ բարաք: Ուրիշ ասելիք չունեմ:

Ու գնաց:

Բրուտանոցի և բոլոր շինությունների տանիքների եզրերից կախված սառցե լուլաները սկսեցին կաթել:

— Ճը՛լթ, ճը՛լթ, ճը՛լթ . . .

. . . Սանոն փոխադրվեց համար 7 բարաքը, հատուկ կարգադրությամբ: Ոչ միայն այդ: Մի անգամ նա նստեց Աշոտ դայու տեղը, վերցրեց մի կտոր ցեխ և սկսեց պտտեցնել . դուրս եկավ ինչ-որ ծուռտիկ, հողե աման հիշեցնող բան: Նա վերցրեց իր ստեղծագործությունը, ճխլեց, ձեռների մեջ հունցեց և նորից պտտեցրեց: Մոտեցավ Աշոտ դային և սկսեց օգնել նրան .

— Ցուցամատդ՝ այսպես, բթամատդ՝ այսպես . . . Տղա՝, — բացականչեց նա, — հրաշալի մատներ ունես, — իզուր չէ, որ . . . — Նա լռեց, իսկ ես հիշեցի խաղաթղթերը: Երևի Աշոտ դային այդ և հարակից հանգամանքների մասին ուզեց ակնարկել: Այդ օրը նա պատրաստեց երեք աման, որոնք ոչ մի բանով նման չէին Մամոյի և ոչ մի բանով չէին տարբերվում Աշոտ դայու ամաններից:

Մամոն պաշտոնանկ եղավ: Նա ինքը համոզվեց, որ այդ անխուսափելի է: Մի քանի օրվա ընթացքում Սանոն կարողացավ յուրացնել աշխատանքն առանց քրտինք թափելու և օրական պատրաստել քառասունից հիսուն ման:

— Անպիտանի մատները կարծես ստեղծված են բրուտության համար, — ասում էր Աշոտ դային:

Լյալյայի ուրախությանը չափ ու սահման չկար:

Չափ ու սահման չկար նաև Մամոյի ուրախությանը . եթե Սանասարի մատներն ստեղծված էին բրուտության համար, ապա Մամոյի ոտներն ստեղծված էին ցեխ հունցելու համար: Ամաններ պատրաստելը Մամոյի համար տաժանակիր աշխատանք էր . նա տանջվում էր, ջանք թափում, թափում ազնիվ քրտինք, բայց նրա մատների տակից դուրս էին գալիս անհաջող, ծուռտիկ, մեկը մեծ, մյուսը փոքր, անհամաչափ ամաններ: Ամաններ շինելուն նա սիրով հրաժեշտ տվեց, սիրով իր տեղը զիջեց Սանոյին նաև այն պատճառով, որ նա զգում էր, այդ Լյալյայի ցանկությունն է: Նա պատրաստ է կատարելու Լյալյայի բոլոր ցանկությունները, իսկ նա, Լյալյան, անչափ սիրալիր է: Շատ բան հարկավոր չէ Մամոյին, նա քչով գոհանում է, մի ժպիտ, մի «Մումու, ո՞նց ես», իսկ երբ մի անգամ Լյալյան ամրացրեց նրա բաճկոնի թուլացած կոճակը, նա իրեն զգաց յոթերորդ երկնքում . . . Այդ գիշեր նա երազում տեսավ, որ Աբասթումանումն է, նստել է կառքը, ձիերին չափ է տալիս, թռչում են ձիերը, իսկ կառքում նստած է նա, Լյալյան, — Մումո՛ւ, կամաց քշիր, — խնդրում է նա:

Մի անգամ, առավոտյան, երբ «գործարար բակ» հասան բրիգադները, Լյալյան հեռվից ինձ նշան արավ, որ հետևեմ իրեն: Ես հետևեցի նրան մինչև դերձականոցի դուռը, Լյալյան կանգ առավ և համոզվելով, որ ոչ ոք չի լսում մեզ, հարցրեց .

— Ձեզնից ո՞վ է ծանրոց ստացել վերջերս:

— Վարպետը, — պատասխանում եմ ես:

— Քեզ հայտնի՞ է, թե ծանրոցում ինչ է եղել, — հարցնում է նա:

— Հայտնի է:

— Օձառ կա՞ր:

— Այո:

— Քանի՞ կտոր:

— Երկու:

— Ի՞նչ գույնի:

— Վարդագույն:

— Հասկանալի է, — ասում է նա, — ցտեսությո՛ւն:

Ես դիմում եմ դեպի բրուտանոց, ուզում եմ բացատրել այս հարցաքննության իմաստը, բայց ոչ մի կերպ չեմ կարող:

Բրուտանոցում Աշոտ դային ոչինչ չհարցրեց: Ես էլ նրան ոչինչ չպատմեցի: Սովորաբար մենք երեկոյան տանն ենք խոսում օրվա կարևոր և անկարևոր հարցերի մասին:

Սկսվեց սովորական աշխատանքային օրը: Ընդմիջումին ներս մտավ Լյալյան և առանց սովորական բարևի կամ մեկի վրա նայելու, արագ մոտեցավ Սանոյին, որն զբաղված էր ձեռքերը լվանալով:

— Վերցրո՛ւ, գո՛ղ, և չհամարձակվես մյուս անգամ աչքիս երևալ:

Սանասարը նայեց Լյալյայի ձեռքի վարդագույն օձառներին և գունատվեց:

— Գո՛ղ, գո՛գ, գո՛ղ, գո՛ղ, ո՞ր ձեռքով գողացար, ո՞ւր է կացինը . այս րոպեիս ես . . . — նա վերցրեց վառարանի մոտից փոքրիկ կացինը:

Արագ մոտեցավ Աշոտ դային:

— Լյալյա, կացինը տեղը դիր . . . դու ինչո՞ւ ես լալկվել, չես բացատրում . . . Թող քեզ հայտնի լինի, Լյալյա, որ Սանոն մեր գանձապահն է, մեր տնտեսվարը, մեր պահեստապետը և պահում է իրեն օրինակելի: Ոչ մի գերածախս, ոչ մի յուրացում: Ինչ վերաբերում է այդ . . . օճառներին, ես նրան լիազորել էի, որ նվիրի քեզ . . . Մեր կոլեկտիվի կողմից, ի՛ր կողմից:

Կացինն ընկավ Լյալյայի ձեռքից:

Նրա գնալուց հետո կատարվեց ևս մի զարմանալի բան: Սանոն հարձակվեց Աշոտ դայու վրա:

— Ճը՛լթ, ճը՛լթ, ճը՛լթ . . .

Բրուտանոցի և բոլոր շինությունների տանիքների եզերերից կախված սառցե լուլաներն սկսեցին կաթել:

. . . ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԻ ապակիների վրա անտառային, բուսաբանական պեյզաժներին փոխարինեցին կենցաղային սյուժեներ, երևացին մարդիկ, կենդանիներ: Ցերեկները ապակիների սառույցները հալչում են, գիշերները սառչում և առավոտյան անհայտ, մեծ նկարիչը ապակիների վրա հանդես էր գալիս նորանոր, կախարդական ստեղծագործություններով . . . Ահա ծառերի մեջ թաքնված մի խրճիթ, ծառերի խորքում երևում է մի մարդ որսորդական հրացանով, իսկ կողքին մի շուն ոչ թե չորքոտանի, այլ երկոտանի, բայց անկասկած շուն: Ահա մի կին կանգնած օրորոցի մոտ . երեխան չի երևում, օրորոցը դատարկ է, իսկ կինը ժպտում է անիմաստ ժպիտով: Խաղողով լեցուն զամբյուղը ձեռքին մի աղջիկ է անցնում այգու ցանկապատի մոտով . ցանկապատից այն կողմ երևում է մի տղա, կանացի գլխարկով, հովանոցը բռնած գլխին: Հինգ րոպեից պատկերը փոխվում է, — ճանապարհ է, մի կին, ձեռքը բռնած հոնքերի վրա, նայում է անհայտ ճանապարհին, հետո արջը կանգնած երկու ոտների վրա՝ մի թաթը վեր, մյուսը՝ վար, ասես պարելիս, Հիսուսը խաչի վրա ծիծաղելիս . . . Մի քանի անգամ Լյալյան երևաց, մի անգամ, այնպես, ինչպես տեսա վերջին անգամ՝ գլուխը բարձին, աչքերը փակ, կիսաբաց շուրթերով, իսկ ինքը գունա՛տ, գունա՛տ . . .

Սանոն հարձակվեց Աշոտ դայու վրա, գրկեց նրան հուզմունքից խեղդվելով, հետո որսաց նրա ձեռքը:

Աշոտ դային ձեռքը խլեց:

— Թո՛ղ, իմ ձեռքից ձեռք քաշիր: Մտածիր քո՛ ձեռքի մասին, մաքրիր ձեռքդ ու համբուրիր քո՛ մաքրված ձեռքը: Ձեռքը տրված է մարդուն աշխատելու համար և ոչ թե . . . գողանալու կամ լիզելու:

Ինքն իրեն կորցրած Սանոն պոկվեց Աշոտ դայուց, նետվեց ետ, վերցրեց կացինը ձախ ձեռքով, աջ ձեռքի դաստակը դրեց դազգահին ու բարձրացրեց կացինը: Աշոտ դային խլեց կացինը:

— Այդ էլ ավելորդ է, դեռ պետք կգա քեզ . չլիներ ձեռքը, ոչինչ չէր լինի աշխարհում, ո՛չ քաղաք, ո՛չ գյուղ, ոչինչ չէր լինի . . . Ոչինչ բան է ուղեղը, մարդկային ուղեղը կարող է հղանալ հազար բարիք և հազար չարիք: Ձեռքն է կառուցում բանտ ու պիոներական պալատ, ձե՛ռքը, ձե՛ռքը . . . Մաքո՛ւր պահիր ձեռքը . . .